

ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ

ԱՊԱՐԱԿԻ
ՀԵՐՈՍԱՍՏՐԸ

2005

Երևան

Հայազն Տիգրան

Հ 246 Ապարակի հերոսամարտը -Եր.:Հեղինակային հրատարակություն,
2005 թ. 60 էջ:

Մեծ է Ապարանի ինքնապաշտպանական հերոսամարտի պատմական նշանակությունը: Այն համազոր է Սարդարապատին: Այդ հերոսամարտերը մեր ժողովրդի գոյատևման նոր Ավարայրն էին՝ մեկը Արաքս գետի, մյուսը՝ Քասաղ գետի ափին:

Անմահ է վասն հայրենյաց ընկած ապարանցի և հարևան գավառներից օգնության եկած աշխարհազորայինների, զինվորների հիշատակը: Նրանց և ճակատամարտի մասնակիցների ու դեկավարների հիշատակին բացառապես Ապարանի ժողովրդի պայքարի արդյունքում խորհրդային տարիներին՝ 1974-1979 թվականներին կանգնեցվել է սերունդների հիշողությանն ուղղված «Վերածնունդ» փառահեղ հուշարձան-կոթողը:

ՏԻԳՐԱՆ ՀԱՅԱԶՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ Հ. Տ. 2005

Ծուրջ վեցդարյա պետականազրկությունից, 1915 թվականի Եղեռնից հետո կործանման-անգոյության եզրին հասած հայության արևելյան մի փոքրիկ կղզյակին, որ հիմնականում Երևանն էր ու շրջակայքը, հայ ազգի պատմական ու կենսաբանական թշնամի թուրքիան 1918 թվականի մայիսին պարտադրել է եռաճակատ պատերազմ: Կոիվ է գնացել Սարդարապատում, Ապարանում, Վանաձորում: Ծանր, արյունաքամ մարտերի արդյունքով հայերին հաջողվել է ոչ միայն հաղթել թշնամուն և ապահովել հայության գոյությունը, այլև այդ հաղթանակներով դնել Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնաքարը՝ 1918 թվականի մայիսի 28-ին հոչակել Հայաստանի անկախությունը:

Հայրենիքին սպառնացող վտանգի պահին հայ ազգը, անկախ քաղաքական ու դասակարգային պատկանելությունից, հանդես է բերել իր զենային դիմադրողական եզակի առանձնահատկությունը, կանգնել է ճակատազրին հանդիման և իր լինել-չլինելու խնդիրը լուծել հօգուտ լինելության: Սարդարապատի, Ապարանի հերոսապատում-հաղթանակ ներից յուրաքանչյուրը ձեռք է բերվել պարտադրված պատերազմին բացառիկ միասնությամբ, նվիրումով, հերոսությամբ մասնակցելու, այդ ճակատամարտերին իր լավագույն որդիների արյունը տալու գնով:

Ապարանի հերոսամարտը հայ ազգի մղած եզակի կրիվներից մեկն է: Այստեղ հիմնական կրվող ուժը ճակատամարտի առաջին օրվանից մինչև հաղթական ավարտը ապարանցի աշխարհազորայիններն էին: Այդ նրանք և միայն նրանք են հավաքական որոշում կայացրեցրել փակել թուրքի ճանապարհը և պահպանել սեփական ընտանիքների պատիվն ու արժանապատվությունը: Եվ նրանք իրենց խնդիրը կատարել են:

Հերոսականություն ապարանցին փոխառնելու կարիք չունի: Իր հերոսականության արդյունքը պատմության սեփականությունը դարձած Ապարանի հերոսամարտն է:

Ապարանի հերոսամարտը սկսվել է 1918 թվականի մայիսի 22-ի երեկոյան, երբ Էսաղ փաշայի դիվիզիան և Քյազիմ փաշայի գնդերը մտել են Ապարանի զավառի սահմանը, իսկ առաջապահ ջոկատները երևացել են Սիրաքի կամրջի դիմաց և թնդացել է նրանց վրա արձակված ապարանցի աշխարհազորայինների հրացանազարկը:

Սակայն ճակատամարտը սկսվել էր ավելի վաղ, երբ մայիսի 15-ին թուրքերը մտել եին Ալեքսանդրապոլ և առանց դիմադրության Արագած սարի հարավակողմով ու հյուսիսակողմով շարժվել դեպի Հայաստանի սիրտը՝ Երևան:

Հայաստանը պիտի պաշտպանվեր, պիտի կանգնեցվեին թուրքական հորդաները, բայց հարցն այն էր, թե որտե՞ղ: Որոշվել է, որ հարավակողմից արշավող թուրքերի ճանապարհը պիտի փակվի Եջմիածնի մատուցներում՝ Սարդարապատում, իսկ հյուսիսակողմից արշավողների ճանապարհը փակվի... Արարատյան դաշտի մատուցներում:

Հյուսիսակողմով արշավող թուրքերն անարգել մտել են Սպիտակ, գրավել շրջակա գյուղերը և ընթացքից շրջվել դեպի Ապարանի ճանապարհը: Համընդհանուր խուճապ է սկսվել: Սկսել են տեղահանվել նաև Ապարանի սահմանային գյուղերը:

Հյուսիսակողմից արշավող թուրքերի ճանապարհը հնարավոր էր փակել Աշտարակի մոտ, Եղվարդում, Երևանի սահմանագլխին: Բայց Ապարանում թուրքերի առաջն առնելու մասին որևէ պլան նախապես չէր կազմվել: Եվ այդ ճակատագրական պահին, երբ թվում էր, որ այլևս ոչ մի ուժ չէր կարող Ապարանի գավառամասում փակել թուրքերի ճանապարհը, Ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանի հրամանով Ապարանի գավառապետ Սեղրակ Զալալյանը և Ապարանի գավառի Արագյուղ գյուղի բնակիչ, Երևանի ոստիկանության աշխատակից Արսեն Տեր-Պողոսյանը սկսել են ծանրանալ իրավիճակին: Նրանք հանդիպել են Ապարանի հոգևոր թեմի առաջնորդ Հովհաննես քահանա Տեր-Մինասյանի հետ: Իրավիճակի վերլուծությունից ծնվել է ինքնապաշտպանության վճիռը. կանգնել թշնամու դեմ, չգաղթել և չհանձնվել նրա ողորմածությանը:

Ինքնապաշտպանության հրամանատարությունն իրենց վրա են վերցրել Սեղրակ Զալալյանն ու Արսեն Տեր-Պողոսյանը, ստեղծվել է պաշտպանության խորհուրդ Հովհաննես քահանա Տեր-Մինասյանի նախագահությամբ:

Սեղրակ Զալալյանի անձնական պաշտպանության ձիավորները հրաման են ստացել փակել նահանջի ճանապարհը և գենք կրելու ընդունակ բոլոր տղամարդկանց վերադարձնել Ապարան գյուղ: Մայիսի 17-ին գավառում հայտարարվել է պատերազմական իրավիճակ: Անընդհատ զարկել են եկեղեցիների զանգերը: Գյուղերի ավագները, քահանաները մարտի ընդունակ տասնութ տարեկանից բարձր բոլոր տղամարդկանց գինել և ուղարկել են պաշտպանության խորհրդի տրամադրության տակ:

Սեղրակ Զալալյանն ու Արսեն Տեր-Պողոսյանը ուսումնասիրելով տեղանքը՝ որոշել են պաշտպանության առաջին գիծը հաստատել Նիգավան-Սիրաք գյուղերի միջև ձգվող բարձունքներում: Նորակազմ զորացուկատներն էլ ուղարկվել են հենց այդ գիծը:

Գավառում իրավիճակը կայունացել է, Ապարան գյուղից արևելք գտնվող գյուղերի տեղահանությունը կանգնեցվել: Մայիսի 22-ին պաշտպանության առաջին, ինչպես նաև ուղղակի Ապարան գյուղի մոտ ձևավորվող երկրորդ գծում աշխարհազորայինների թիվը հասել է 2500-ի:

Փաստորեն, Ապարանի գրեթե ամեն գյուղ մոտ հարյուր տղամարդ էր ուղարկել ճակատ: Շիշտ է՝ ժամանակակից գենք բոլորը չեն, որ ունեին, զինամքերը սակավ էր, գնդացիրները երկուսն էր, իսկ թնդանորներ չկային, բայց առկա էր անկոտրում կամք և սեփական հողը, տունը հարազատներին պաշտպանելու վճռականությունը:

...Թուրքերը, որ ոչ մի դիմադրություն չէին սպասում, առաջապահ ջոկատների գնդակոծությունից շփոթվել են և հետ քաշվել ու սպասել մայիսի 23-ի լուսաբացին: Գիշերվա ընթացքում, փաստորեն, ինչպես և Արագած լեռան արևմտյան ստորոտին՝ Սարդարապատում, Արագած լեռան արևելյան ստորոտին ևս ձևավորվել է ռազմաճակատ:

Երևանում ճիշտ է գնահատել ստեղծված իրավիճակը և նույն գիշեր նոր ձևավորված ռազմաճակատի հրամանատար է նշանակվել քազմափորձ Դրաստամատ Կանայանը (Դրոն):

Մայիսի 23: Հայաստանում պահեստային գինված ուժեր չկային: Ամբողջ օրը Ապարանի ռազմաճակատում թշնամուն դիմադրավել են ապարանցի աշխարհազորայինները: Թուրքերը հրետանու և գնդացրային կրակով ճնշել են մոտ 8 կիլոմետրանոց ռազմաճակատի ամբողջ գիծը պահող աշխարհազորայիններին: Չնայած համառ դիմադրությանը՝ կորուստները զգալի էին և մարտական գործողությունները դեկավարող Արսեն Տեր-Պողոսյանը երեկոյան հրամայել է նահանջել երկրորդ գիծ: Աշտարակի գավառամասից Սեղրակ Զալալյանը կարողացել է մարտադաշտ ուղարկել աշխարհազորայինների մի քանի նոր ջոկատ: Առաջինը մարտադաշտ են հասել 100 դովերցիններ՝ քահանա Տեր Գևորգի գլխավորությամբ:

Դրոն ոտքի էր հանել գրեթե բոլոր գինված խմբերը: Մինչև կեսգիշեր Ապարանի ռազմաճակատ են հասել գանձակեցի պորուչիկ Զեմյալի (Հարություն Նանումյան), գանգեզուրցի Յապոնի, գառնեցի Մարտիրոսի, Քաշալ Ղազարի, սասունցի Մանուկի, մակվեցի Մեսրոպի (իին բայազետցինների), բուլանդցի Մուրադի ջոկատները:

Մայիսի 24: Արամ Մանուկյանի գիտությամբ՝ Երևանի գորաբաժնի հրամանատարությունը որոշել է Սարդարապատից Ապարանի ռազմաճակատ փոխադրել կանոնավոր ռազմական միավորումներ: Օրվա առաջին կեսին Արագածի ստորոտով՝ Արագած-Քուչակ գյուղերի վրայով ճակատ է մտել և ռազմաճակատի ծախ կողմում դիրքավորվել է գնդապետ Դոլոխանյանի 6-րդ հրաձգային գունդը, որը համարվել էր հիմնականում ապարանցի մարտիկներով: Նույն օրվա ընթացքում Ապարանի ռազմաճակատ են հասել փոխգնդապետ Կորելկովի հեծյալ գունդը, կապիտաններ Սակելյարիի և Կլիշի հրետանային մարտկոցները, որոնցից մեկը դիրքավորվել է Ապարան գյուղի «Դեմեր» կոչվող հատվածում:

Մայիսի 25: Թուրքական բանակի հրամանատար Վեհիր փաշան Հայաստանի երեք ուղղություններում՝ Սարդարապատի, Ապարանի, Վանաձորի ուղղությամբ գործող գորամիավորումներին վճռական հարձակման հրաման է տվել, և այդ օրը Ապարանի ճակատը դարձել է Հայաստանում ծավալված պատերազմի կենտրոնը: Բավական էր թուրքերն այստեղ ճեղքեին պաշտպանությունը և անմիջականորեն հարվածի տակ կմնար Սարդարապատը: Կեսօրին, անձրկի տակ թուրքերը փորձել են Սարալանց գյուղից արևելք ընկած հատվածում անցնել հորդացած Քասաղ գետը, դուրս գալ աշխարհազորայինների թիկունքը և կոտրել ապարանցիների դիմադրությունը: Պահը դարձել է օրհասական, բայց տեղ հասած կադրային ջոկատները գրավելով Քասաղի երկու ափերի բարձունքները, կրակի տակ են առել թուրքերին ու ստիպել նրանց անկանոն նահանջել: Օրվա երկրորդ կեսին թուրքերը կատաղի գրոհ են ձեռնարկել Արագածի փեշին: Գերակշիռ ուժերով նրանց հաջողվել է ճեղքել հայերի պաշտպանությունը Ալուջայի ծորի մոտ և ավելի քան մեկ կիլոմետր թափանցել հայերի թիկունքը: Ճակատը թեև մեծ դժվարությամբ, բայց փակվել է, և թուրքերը հայտնվել են երկկողմ կրակի տակ: Եղվարդի կողմից մարտադաշտ հասած գնդապետ Զալինյանի 300 գինվորներն ու Արագածի փեշով առաջացող փարպեցի աշխարհազորայինների հարյուրյակը (Տեր Գևորգ քահանայի գլխավորությամբ) փակել են թուրքերի ճանապարհը, և վերջիններս հայտնվելով եռակողմ կրակի տակ՝ գլխովին ոչնչացվել են (միայն քչերին է հաջողվել դեպի Արագածի գագաթը փախչելով՝ փրկվել):

Կեսօրին Ապարանի ռազմաճակատում նոր վտանգի ուղղություններ են ի հայտ եկել: Թուրքական հրամանատարության պահանջով Ապարանի գավառի արևելյան կողմից՝ Զորագլուխ գյուղի ուղղությամբ հարձակման են անցել Հանքավանում բնակվող թուրքերը: Թշնամու ճանապարհն այս ուղղությամբ փակել է Զորագլխի, Թթուջրի, Զբնադի բնակչությունը: Ճանապարհ միացյալ ջոկատը: Մարտը տեղի է ունեցել Կարմիր վանք հնավայր-բնակավայրի մատուցյաներում: Թուրքերին չի հաջողվել կոտրել ապարանցի աշխարհազորայինների դիմադրությունը և չորսժամյա մարտից հետո հետ են քաշվել՝ մարտադաշտում բողնելով քանից ավելի դիակ: Զոհվել է նաև ձորագլխեցի տիրացու Հարությունը:

Գրեթե նույն ժամանակ Թուժական գյուղի կողմից ավելի քան հինգ հարյուր թուրքեր նոր ճակատ են բացել Նորաշեն-Երնջատափ գյուղերի ուղղությամբ: Թուրքերի այս հարձակման մասին տեղեկացված հայկական հրամանատարությունը այս ուղղությամբ ևս հասցրել էր պաշտպանական խրամատներ փորել Նորաշեն գյուղից շուրջ երկու կիլոմետր արևելք գտնվող ավերակ բերդից մինչև Երնջատափ գյուղի քարհանքը: Պաշտպանական այս հատվածում կենտրոնացվել են Նորաշեն և Երնջատափ գյուղերի գրեթե բոլոր տղամարդիկ, շուրջ երեք հարյուր տղամարդ: Սկսված մարտի լուրն ստանալուն պես հայկական հրամանատարությունը այս ճակատ է ուղարկել Վարդենիս գյուղից հավաքագրված հարյուրյակը: Այս ուղղությամբ մարտը շարունակվել է և այդ օրը մինչև մուրճ ընկնելը և մինչև հաջորդ օրվա վերջը: Այս ուղղությամբ ևս բուրքերին չի հաջողվել խուճապ առաջացնել արդեն երեք կողմից կռվող ապարանցիների դեմ և հնարավորություն ստեղծել բուրքական հիմնական ուժերի համար ճեղքելու ռազմաճակատի կենտրոնական հատվածը: Թուրքերն այս ուղղությամբ տվել են հարյուրից ավելի զոհ: Հայկական կողմից զոհվել են 17 նորաշենցի, 3 երնջատափցի, 1 վարդենիցիցի:

Ապարանի հերոսամարտի նախորդ ուսումնասիրողներից որևէ մեկը Զորագլխի և Նորաշեն-Երնջատափի ռազմագործողությունների մասին գաղափար իսկ չունի, իսկ որոշներն ել կարծել են, թե թուրքերը ճեղքել են ճակատը և հասել մինչև Երնջատափ:

Ապարանի ռազմաճակատը, փաստորեն, մայիսի 25-ին փրկել է Հայաստանը: Թուրքերն այդ օրը մարտադաշտում թողել են 1000-ից ավելի դիակ, գնդացիրներ, զենք, զինամթերք:

Մայիսի 26: Սարդարապատից Ապարան են փոխադրվել կապիտան Խորեն Իգիթսանյանի հրետանային մարտկոցը, գնդապետ Հովսեփյանի 5-րդ հրաձգային գումզը:

Մայիսի 27: Ապարանի ռազմաճակատում հայ աշխարհազորայինների, կադրային զինվորների թիվն անցել է 7000-ից: Թեև բուրքերը դարձյալ թվական գերազանցություն ունեին, բայց հոգերանական առավելությունն անվերապահորեն անցել էր հայերի կողմը: Զկարողանալով դիմագրավել հայերի գրոհներին՝ թուրքերը թողել են Նիգավանը, Սելիքգյուղը և կենտրոնացել են ճահճուտի մոտակա բարձունքներում:

Մայիսի 28: Թիֆլիսում գործող Հայոց Ազգային խորհուրդը Հայաստանը հայտարարել է անկախ պետություն և ստանձնել իշխանության պատասխանատվությունը: Բայց Ապարանի ռազմաճակատում այդ կարևորագույն նորությունը դեռևս չգիտեին:

Դրաստամատ Կանայանն անձամբ ամբողջ ճակատը տարել է թշնամու դեմ զրոհի: Դիրքերը գրավվել են զոհերի գնով: Այդ օրը զոհվել են սեբաստացի Ազարիկը, գանձակեցի Զեմլյակը, գառնեցի Մարտիրոսի հորեղբորորդին, այլ քաջորդիներ: Զնայած կորուստներին՝ հայերը զրոհը չեն դադարեցրել նաև գիշերը:

Մայիսի 29: Թուրքական դիվիզիաների արյունաքամ մնացորդները սպիտակ դրոշ են պարզել:

Ապարանի ինքնապաշտպանական հերոսամարտն ավարտվել է փառահեղ հաղթանակով:

... Մեծ է Ապարանի ինքնապաշտպանական հերոսամարտի պատմական նշանակությունը: Այն համազոր է Սարդարապատին: Այդ հերոսամարտերը մեր ժողովրդի գոյատևման նոր Ավարայրն էին՝ մեկը Արաքս գետի, մյուսը՝ Քասաղ գետի ավին:

Անմահ է վասն հայրենյաց ընկած ապարանցի և հարևան գավառներից օգնության եկած աշխարհազորայինների, զինվորների հիշատակը:

Նրանց և ճակատամարտի մասնակիցների ու դեկավարների հիշատակին բացառապես Ապարանի ժողովրդի պայքարի արդյունքում խորհրդային տարիներին՝ 1974-1979 թվականներին կանգնեցվել է սերունդների հիշողությանն ուղղված «Վերածնունդ» փառահեղ հուշարձան-կոթողը:

ԱՊԱՐԱՆԻ ՀԵՐՈՍԱՍՏԻՒԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ

Գավառապետը

ԶԱԼԱԼՅԱՆ ՍԵԴՐԱԿ ՍԱՐԳՍԻ, ռազմական, քաղաքական գործիչ, 1918 թվականի մայիսի 22-29-ի Ապարանի հերոսամարտի կազմակերպիչ, Ապարանի, Էջմիածնի գավառապետ, Երևան քաղաքի միլիցիայի պետ:

Ծնվել է Ապարանի գավառի Քասաղ գյուղում:

Տասներկու տարեկանում ընդունվել է Երևանի ռուսական գիմնազիա: Մի քանի տարի անց Գալուստ Ալյանի նախաձեռնությամբ ընդգրկվել է «Հայ երիտասարդների դաշնակցության» «Փոթորիկ» խմբում, որի գործունեությանը մասնակցել է Նիկոլ Դումանը:

Գիմնազիան ավարտելուց հետո, 1906 թվականին ընդունվել է Սանկտ-Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Այստեղ ծանոթացել է սոցիալ-դեմոկրատական տեսությանը և անդամագրվել համալսարանի սոցիալ-դեմոկրատական ընկերակցությանը: Ծանոթացել է նոյն հաստատության բժշկական ֆակուլտետի ուսանող, հետազայում հայտնի բժիշկ ու Հայաստանի Առաջին Հանրապետության գործիչ Ս. Սաժումյանցի հետ: Նրանց մտերմությունը շարունակվել է նաև Հայաստանում գտնվելու տարիներին: 1908 թվականի սկզբին ցարական կառավարությունն ինացել է կազմակերպության մասին և նրա անդամներին դատապարտել աքսորի: Սեղբակը գաղտնի հասել է Թիֆլիս, սակայն ձերբակալվել և աքսորվել է:

Արսորում անցկացրել է 5 տարի: 1913 թվականին վերադարձել է Սանկտ-Պետերբուրգ, ընդունվել Սանկտ-Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և 1917 թվականին ավարտել այն ու իրավաբանի մասնագիտությամբ վերադարձել Հայաստան:

Հայաստանում ծանոքացել է ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ Արամ Մանուկյանի հետ, որը Թիֆլիսի «Հայոց Ազգային խորհրդի» իրավերով եկել էր Երևան և կառավարում էր Արարատյան նահանգը:

Արամ Մանուկյանը Սեղրակ Զալալյանին նշանակել է Ապարանի գավառապետ: Վերջինս ձեռնամուխ է եղել գավառամասի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման գործին:

1917 թվականի վերջին թուրքերը ակտիվ գործունեություն են ծավաել Անդրկովկասի հայաբնակ վայրերում՝ իրահրելով տեղի մահմեդական բնակչությանը պայքարել հայերի դեմ: Հայաստանում ծավալվել է մահմեդական շարժում: Թուրքաբնակ գյուղերում կազմվել են զինված ջոկատներ, որոնք թալանել, ավերել են հայկական բնակավայրերը: Արամ Մանուկյանը խորհրդակցել է հայկական խոշոր բնակավայրերի կառավարիչների հետ՝ շուտափույթ այդ հարցը լուծելու համար: Որոշվել է օժանդակել կամավորական ջոկատների կազմավորմանը և պայքարել մահմեդականների դեմ:

Սեղրակ Զալալյանը Ապարանի գավառամասի գյուղերից հավաքագրել է շուրջ 700 գյուղացի և սկսել վերոհիշյալ շրջանների թուրքական զինված տարրերի ոչնչացումը: Աշխարհազորայինները մի քանի օրվա ընթացքում ոչնչացրել են Քուրդալու և Համամլու գյուղերի մուսուլմանական զինված խմբերը:

Աշխարհազորայինները մասնակցել են Բուժականի և Աղվերանի մարտերին: Դրանք պսակվել են հայերի հաղթանակով:

Խնդիր է դրվել լիկվիդացմել նաև Արագածի արևմտյան ստորոտում գտնվող Ախուրյան գյուղի շրջակայրի թուրքական բազմաքանակ խումբը: Գյուղի մոտակա բարձունքներում տեղի է ունեցել կատարի ընդհարում, որին մասնակցել են նաև Ծաղկահովիտ գյուղի բնակիչները: Այն ավարտվել է հայերի հաղթանակով:

1918 թվականի ապրիլի սկզբին Էջմիածնի գավառի Սասիս թուրքաբնակ բնակավայրում հրոսակախումբը հարձակվել է Գյումրիից Երևան շարժվող ապրանքատար զմացքի վրա, սպանել տասնյակ մարդկանց, բռնազրավել հսկայական քանակությամբ ցորեն: Արամ Մանուկյանը հանձնարարել է Սեղրակ Զալալյանին վերադարձնել բռնազրաված ցորենը:

Ստանալով անհրաժեշտ քանակությամբ զինամթերք՝ Սեղրակ Զալալյանը մոտ 200 աշխարհազորայիններով շտապել է Էջմիածնին: Լուսադիմին ջոկատը Սասիս կայարանի շրջակայրում կրակով է դիմավորել հրոսակախումբին: Ավագակախումբը գլխովին ջախջախվել է: Հացահատիկը վերադարձվել է:

Չորսեր են ավելի քան 60 հայ մարտիկներ:

1918 թվականի մայիսի 15-ին թուրքերը մտել են Գյումրի: Հետագա հարձակման մի ուղղությունն անցել է Ապարանի վրայով:

Էսադ փաշայի դիվիզիան, մայիսի 20-ին գրավելով Սպիտակը՝ շարժվել է Ապարանի ուղղությամբ: Ճանապարհին գտնվող գյուղերի բնակիչները լքելով ամեն ինչ՝ շարժվել են Ապարան: Ամենուր ճամփանները բռնվել են գաղթականների քարավաններով: Ծաղկահովիտ գյուղում Էսադ փաշայի դիվիզիան ու Քյազիմ փաշայի գնդերը միացել և շարունակել են առաջխաղացումը:

Գաղթականների առաջին քարավանի երեալը ճգնաժամային վիճակ է ստեղծել Ապարանում՝ արդեն մայիսի 18-19-ին:

Հապաղել չեր կարելի և Ապարանի գավառապետը հստակ որոշում է կայացրել. դիմել ինքնապաշտպանության: Նրան գործակցել են Ապարանի գավառի հոգեոր հովիվ Տեր-Հովհաննես Տեր-Համազասպի Տեր-Սկրտչյանը (Վարդենիս), արագյուղի Արսեն Սամսոնի Տեր-Պողոսյանը (Բաֆֆու հերոսի՝ Խենքի որդին):

Առաջին հերթին հարկավոր էր կասեցնել մասսայական արտահոսքը դեպի Արարատյան դաշտ և Երևան: Գավառամասում հայտարարվել է արտակարգ դրություն: Ամենուր հնչել են եկեղեցիների զանգերը: Հաջողվել է Ապարան վերաբարձնել հարյուրավոր տղամարդկանց: Սեղրակ Զալալյանը և Արսեն Տեր-Պողոսյանը իրենց հավաքագրած աշխարհազորայինների համար նշել են պաշտպանության առաջին բնագիծը՝ Նիգավան-Միրաք գյուղերի միջև ընկած բարձունքները: Արսեն Տեր-Պողոսյանը աշխարհազորայիններից կազմել է մարտական ջոկատներ:

Մայիսի 22-ին Միրաք գյուղի մոտ լսվել է աշխարհազորայինների հրացանազարկը:

Սկսվել է Ապարանի հերսոսամարտը:

Ապարանից աշխարհազորայինները ցուցաբերել են համար դիմադրություն: Մարտական ջոկատներն ամրնդիատ համալրվել են: Սեղրակ Զալալյանի ջոկատը գրադեցրել է պաշտպանության դժվարագույն տեղամասը: Իր քաջությամբ նա ոգևորել է շատերին: Ապարանից աշուղ Անդրանիկ Ստեփանյանը գրել է.

*Քաջ Վարդանի նման էր կովում Սեղրակը,
Ետ չէր մնում նաև Խենքի զավակը.
Էլ չիմ նայում քորքի զորքին, քանակին,
Զարդում էին մեկ աջ, մեկ ձախ քորքերին:*

Մայիսի 22–29-ին Ապարանի ճակատում լիակատար հաղթանակ արձանագրվեց: Ապարանի ճակատամարտի սկզբնական պաշտպանության դերը մեծ էր հետագա խոշոր մարտերի կազմակերպման, ժամանակ շահելու առումով:

Պաշտպանական մարտերի ժամանակ կազմավորվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Նորաստեղծ հանրապետության Ներքին գործերի նախարար է նշանակվել Արամ Մանուկյանը:

1918 թվականի աշնանը Արամ Մանուկյանը Սեղրակ Զալալյանին նշանակել է Էջմիածնի գավառապետ:

1919 թվականների սկզբին Սեղրակ Զալալյանը նշանակվել է Երևանի միլիցիայի պետ: Այստեղ ևս նա աշքի է ընկել կազմակերպչական ընդունակություններով: Հաշված օրերի ընթացքում Սեղրակ Զալալյանը Երևանում հաստատել է կարգուկանոն:

1920 թվականի նոյեմբերին Սեղրակ Զալալյանն անցել է արտասահման: Միսաք Թորլաքյանն իր «Օրերու հետո» հուշապատումի մեջ Սեղրակ Զալալյանի մասին գրել է. «...1920 թվականի վերջերուն իրեն կը յանձնուի նաեւ կառավարական պաշտօնեությունը երկրտն դուրս հանելու պարտականությունը» (Բեյրութ, 1963, էջ 557–558):

Սեղրակ Զալալյանն անցել է Պոլիս, ապա Գերմանիա՝ ջարդարարների ահաբեկումը կազմակերպելու նախատակով: Որոշ ժամանակ ուսուցչություն է արել Բուլղարիայում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ձերբակալվել է որպես անգլո-ամերիկյան լրտես, սակայն Դրաստամատ Կանայանի միջամտությամբ ազատվել է:

1947 թվականին Սեղրակ Զալալյանը բնակություն է հաստատել Ամերիկայի Սիացյալ Նահանգներում:

Մահացել է 1959 թվականին, թաղվել է Դետրոյտում:

Աշխարհագորի հրամանատարը

ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ ՍԱՍՄՈՆԻ, ազգային, ռազմական գործիչ, 1918 թվականի մայիսի 22-29-ի Ապարանի հերոսամարտի կազմակերպիչ-աշխարհագորի հրամանատար, հունական բանակի գնդապետ (1920 թ.):

Ծնվել է 1877 թվականի մայիսի 10-ին, Էջմիածնի գավառի Ապարանի գավառամասի Արագյուղ գյուղում (Բաֆֆու հերոս Խենքի՝ Սամսոն Տեր-Պողոսյանի առաջին կնոջ՝ Աննայի որդին է):

Ստացել է իր ժամանակի համար լավ կրթություն: Ավարտել է Արագյուղի ծխական դպրոցը, Երևանի ուսուցչական սեմինարիան, Սամկտ-Պետերբուրգի հասուլ գինվորական դպրոցը:

19-րդ դարավերջին վերադարձել է Հայաստան և, ազգային-ազատագրական շարժման մասնակից իր ժամանակակից երիտասարդների նման, անցել է Արևմտյան Հայաստան և Անդրբանիկի հրամանատարությամբ մասնակցել է բազմաթիվ մարտերի՝ աչքի ընկնել արտակարգ խիզախությամբ ու հնարամտությամբ:

1905 թվականին Ապարանի գավառամասի և հարևան գավառամասերի գյուղերից հավաքագրած 300 երիտասարդների հետ գիշերով հարձակվել և զլխովին ոչիշացրել է Արայի լեռան ստորոտին գտնվող երկու թուրքական գյուղերի և Ուշի գյուղի թուրքերին, որոնք ըստ հավաստի տեղեկությունների պատրաստվել էին ավերելու շրջակայքի հայկական գյուղերը:

1907 թվականին հերթական անգամ գենք տեղափոխելիս, ճերքակալվել է ոուս սահմանապահների կողմից և բանտարկվել Կարսի բերդում: Սամսոն Տեր-Պողոսյանի բոլոր փորձերը որդուն ազատելու ուղղությամբ ապարդյուն են անցել: Դատապարտվել է 7 տարվա ազատազրկման և 1908 թվականին աքսորվել Սիբիր:

1917 թվականին ազատվել է կալանքից և վերադարձել Հայաստան: 1917 թվականին Հայաստանի Ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանը հաշվի առնելով նրա անմնացորդ նվիրումը, անարդարությունների հանդեպ անհաշտ վերաբերմունքը և փորձը՝ նշանակել է Երևանի պարետ Արշ Շահիսարունուն ենթակա ռազմականացված ոստիկանության պետ:

1918 թվականի մայիսի 17-ին Արամ Մանուկյանի հրամանով ապարանցիներից կազմված պահապան ջոկատով ուղարկվել է Ապարան՝ այս ուղղությամբ թուրքերի հավանական հարձակման դեպքում գավառի պաշտպանությունը կազմակերպելու և դեպի Երևան թուրքերի առաջխաղացումը կասեցնելու համար:

1918 թվականի մայիսի 17-22-ին Ապարանի գավառապետ Սեղրակ Զալալյանի, շրջանի հոգևոր հովիվ Տեր Հովհաննես Տեր-Սկրտչյանի հետ նախապատրաստական մեծածավալ աշխատանք է իրականացրել Ապարանի և հարևան շրջանների բնակչության շրջանում՝ աշխարհագոր կազմակերպելու, ռազմավարական դիրքեր նախապատրաստելու, այդ ուղղությունում ընդհանուր խուճապի մթնոլորտը մեղմելու ուղղությամբ: Մայիսի 22-23-ին անմիջականորեն դեկավարել է Ապարանի պաշտպանական առաջին մարտերը, և աշխարհագորայինների միջոցով փակել Երևան արշավոր թուրքական դիվիզիայի ճանապարհ՝ մինչև կառավարական ուժերը Դրաստամատ Կանայանի գլխավորությամբ հասել են Ապարանի ճակատ: Առանձնապես աչքի է ընկել Մայիսի 22-ին Սիրաք գյուղի կամքջի մոտ նախապատրաստած ծուղակով: Թուրքական առաջապահ հետախուզական գումարտակը որևէ դիմադրության չափանիկով առաջացել է, իսկ Նիգավան գյուղի և Ուղտասարի լեռնաթերում

դպրանակալած աշխարհազորայինները փակել են թուրքերի թիկունքը և անխման ոչնչացրել շրջապատման մեջ հայտնված թուրքերին: Հետագա օրերին նույնային հմտորեն է դեկավարել իրեն վստահված չորս հազարից ավելի աշխարհազորայիններին:

Ապարանի հերոսամարտի ավարտից մեկ ամիս անց մեկնել է Պոլիս: Իր կյանքի գործը համարելով թուրքերի դեմ կռիվը, հույների կողմից ակտիվորեն մասնակցել է 1918 թվականին սկսված հոյս-թուրքական պատերազմին: Յուցարերած ուազմական հմտության, կազմակերպական ունակությունների համար հունական բանակի դեկավարության կողմից արժանացել է գնդապետի կոչման: Հունաստանի բազավոր Կոստանդինը նրան պարզեցրել է շքանշանով:

Հոյն-թուրքական պատերազմի ավարտից հետո վերադարձել է Հայաստան և կրկին ծառայության անցել ուազմականացված ոստիկանությունում:

Հայաստանի Առաջին Հանրապետության անկումից հետո, 1920 թվականի դեկտեմբերին, հեռացել է արտասահման:

1921-1927 թվականներին ապրել է Բուլղարիայում, 1927 թվականին անցել է Ռումինիա: Ծիրապետելով ռումիներենին, չունենալով աշխատանք՝ հայտնվել է ծանր կացության մեջ: Օգնության ձեռք են մեկնել տեղաբնակ հայերը և նա նշանակվել է Բուլիսարեստում բնակվող Սելիք անունով հայազգի մի մեծահարուստի քաղաքից դուրս գտնվող կալվածքի կառավարիչ:

Լինելով մեծ հայրենասեր, անհունորեն Հայաստանին սիրահարված մարդ, մշտապես մտածել է Հայրենիք վերադառնալու մասին: 1935-1936 թվականներին նրան նման առաջարկ է արել նաև Եղբայրը՝ Վասակ Տեր-Պողոսյանը: Այդ թվականներին ավելի քան 200 էջի վրա շարադրել է իր հուշերը (հուշերի երկու հաստափոր տետրերը, ցավոք, 1952-1953 թվականներին, կասկածելի հանգամանքներում, Երևանում սովորող որդու՝ Սամսոն Տեր-Պողոսյանի գրադեցրած տնից անհայտացել են):

1938 թվականի մարտ ամսին ծանր վիրահատության է ենթարկվել և մահից առաջ կտակել է մարմինը հողին հանձնել մայր հողում: Աճյունը դրվել է Բուլիսարեստի հայկական եկեղեցու գավթում: Հերոսին հրաժեշտ տալու համար եկել են երկրի բոլոր կողմերից: Հոգեհանգստի արարողությունը կատարել է անձամբ Ռումինահայոց եկեղեցու հովվապետ եպիսկոպոսը: Հերոսի մարմինը թաղվել է Բուլիսարեստի հայկական գերեզմանոցում: 1947 թվականին հոր կողքին թաղվել է նրա 16-ամյա դուստր Մալվինան:

1948 թվականին կինը՝ Մարգարիտը, որդին՝ Սամսոնը և դուստրը՝ Աննան ներգաղթել են Հայաստան:

Հոգևոր հովիվը

ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ՀԱՍԱՉԱՍՊԻ, քահանա, Ապարանի շրջանի հոգևոր հովիվ, Ապարանի հերոսամարտի կազմակերպիչներից:

Ծնվել է 1880 թվականին, Ապարանի շրջանի Վարդենիս գյուղում:

1893 թվականին ավարտել է Էջմիածնի ծխական հնգամյա դպրոցը, 1899 թվականին՝ գերազանց գնահատականներով՝ Բաքումիի թեմական հոգևոր դպրոցը, 1904 թվականին՝ զինվորական դպրոցը:

1905-1909 թվականներին ենթասպայի աստիճանով ծառայել է ոուսական բանակում:

1899-1904 թվականներին եղել է Բարումի հայկական եկեղեցու, 1910-1913 թվականներին՝ Ապարանի շրջանի Վարդենիս գյուղի եկեղեցու դպիր:

1914 թվականին հոր՝ Տեր-Համազասպի մահից հետո ձեռնադրվել է Վարդենիս գյուղի քահանա:

1915 թվականին նշանակվել է Ապարանի շրջանի հոգևոր հովիվ և Ապարանի շրջան հասած նոր գաղթականներին պարենավորման կոմիտեի նախագահ:

1918 թվականի մայիսի 22-29-ի Ապարանի հերոսամարտի կազմակերպիչներից մեկն է: 1918 թվականի մայիսի 18-19-ին գավառամասի պետ Սեղրակ Զալայյանի, Երևանի ոստիկանության աշխատակից Արտեմ Տեր-Պողոսյանի, գյուղական տանուտեր-գյուղապետերի, գյուղական քահանաների միջոցով հնչեցվել են Ապարանի շրջանի 40-ից ավելի բնակավայրերի եկեղեցիների զանգերը՝ յուրաքանչյուր գյուղում հավաքագրելով ու զենքի տակ դնելով աշխարհազորականների: Աշխարհազորային ջոկատները դեկավարել են հիմնականում տանուտեր-գյուղապետերը և գյուղական քահանաները:

Աճածամբ Վարդենիս գյուղից հավաքագրել է մոտ 450 մարդ:

Մայիսի 19-ին Վարդենիս գյուղի եկեղեցու շրջակայրում հավաքված ավելի քան 1000 մարդու մասնակցությամբ կազմակերպել է բացօթյա պատարագ և ժողովրդին ուղղված խոսքում ասել է: «Միենա ժողովուրդ, թշնամին հրով ու սրով է առաջանում հետևում թողնելով համատարած կոտորած, քալան, ավերածություն: Շուտով նույն բախտին մենք ենք արժանանալու: Գյումրիի, Արքիկի ժողովուրդը միամիտ գտնվեց, խարվեց, աղ ու հացով դիմավորեց թուրքերին և խստորեն սուժեց: Իսկ մենք այդ սխալը չենք կրկնի և թշնամուն կդիմավորենք գնդակով: Երդենք Սուրբ Խաչով, որ զենքը ձեռքներիս կզոհվենք հանուն մեր սուրբ կրոնի, ազգի փրկության և սերունդների կողմից չենք նզովի և անարգանքի սյունին գամվի»:

Պատարագից անմիջապես հետո զենքով ապահովված 150 մարդու առաջնորդել է Նիգավան-Ծի լճակ-Սիրաք հատվածը, որտեղ ձևավորվել է ճակատի առաջին զիջը: Մայիսի 20-21-ին զենքով ապահովվել են ևս 250 մարդ և դիրքեր են գրավել Ապարան-Սուլքի-Քասաղ գետ-Սարալանց հատվածում:

Տեր-Հովհաննեսի ջանքերով այդ պահին շուրջ 1800 բնակիչ ունեցող Վարդենիս գյուղից որևէ մարդ չի գաղթել (այդ այն դեպքում, եթե Վարդենիսից 5-10 կիլոմետր հետ գտնվող գյուղերի բնակիչների մի մասը գաղթել է դեպի Աշտարակ), ավելին՝ մոտ 10 օր լինելով ճակատի գծին կպած՝ կերակրել է թե անմիջական պատերազմողներին, թե գյուղի բնակիչներին, թե Արքիկ-Սպիտակի տարածաշրջանից գաղթած և Վարդենիս գյուղի շրջակայրում ապաստանած ավելի քան 5000 մարդու (ծերեր, կանայք, երեխաներ):

Մայիսի 23-25-ին զենքի տակ է դրել ևս 100-150 վարդենիսցու:

Աճածամբ դեկավարել է պաշտպանական ու հարձակողական մարտեր Սուլքի-Սարալանց հատվածում:

Հայաստանի Առաջին Հանրապետության գյության երկուսունկես տարիներին նպաստել է երկրի պաշտպանունակության և շրջանի հոգևոր կյանքի կայացման գործին: Այդ հաշվի առնելով Ամենայն Հայոց կաթողիկոսը մինչև 1920 թվականի օգոստոսը նրան արժանացրել է ավագության լանջախաչի և ծաղկյա փիլոն կրելու իրավունքի:

Սինէ 1930 թվականը եղել է Ապարանի շրջանի հոգևոր հովիվը:

1930-1952 թվականներին եղել է Էջմիածնի Սուրբ Շողակար, Թիֆլիսի Նավթուլուի շրջանի, Երևանի Սուրբ Հովհաննես, Աստրախանի և Ղզլարի եկեղեցիների վանահայր, ավագերեց:

1952 թվականի հոկտեմբերին նշանակվել է Գանձակի հայկական եկեղեցու վանահայր: Ծանր հիվանդացել և 1953 թվականի մարտին փոխադրվել է Երևան:

Մահացել է 1953 թվականի ապրիլի 5-ին: Ամենայն Հայոց կարողիկոս Գևորգ Զորեքչյանի կարգադրությամբ Տեր-Հովհաննեսի վերջին օծումը կատարել է Տեր Սահակ Եպիսկոպոսը: Ապրիլի 9-ին բաղվել է Երևանի Շահումյանի շրջանի գերեզմանատանը:

ԱՊԱՐԱՆԻ ԾԱԿԱՏԱՍԱՐՏԻ ՍԱՍՆԱԿԻՑ ԱՊԱՐԱՆՑԻՆԵՐԻ

ՑՈՒՑԱԿ

(մոտավոր)

Խնդրում ենք ներողամիտ լինել, եթե ցուցակն ընթերցելիս չգտնեք Ձեր հարազատի անուն - ազգանունը: Ապարանի հերոսամարտին մասնակցել են ավելի քան 4000 ապարանցի աշխարհազրայիններ: Առաջին անգամ մենք փորձ ենք արել ստեղծել մասնակիցների մի ընդհանուր ցուցակ: Մեզ հաջողվել է գրառել ավելի քան 1070 մանդու անուն: Խնդրում ենք Ձեր հարազատների անունները գրառել և փոխանցել հեղինակին՝ առաջիկա հրատարակությունում լրացնելու կատարելու համար:

Մենք պարտավոր ենք իմանալ, ճանաչել և հիշել Ապարանի հերոսամարտի յուրաքանչյուր մասնակցի: Նրանցից յուրաքանչյուրը հիշվելու իրավունք ունի:

ԱՊԱՐԱՆ

- Ազիզյան Արմենակ,
- Ազիզյան Ստեփան,
- Ազիզյան Վարդան,
- Ալեքսանյան Սկրտիչ,
- Ալոյան Աղարեկ Եփրեմի,
- Ալոյան Արամ Հովհաննեսի,
- Ալոյան Արմենակ Գերասիմի,
- Ալոյան Մնացական Գերասիմի,
- Ալոյան Մուշեղ Գերասիմի,
- Ալոյան Սարիբեկ Հովհաննեսի,
- Ալոյան Սիմոն Գրիգորի,
- Ալոյան Վաղինակ Տիգրանի,

13. Ալոյան Տիգրան Գերասիմի,
14. Առաքելյան Շմավոն (զոհվել է մայիսի 24-ին),
15. Ասլանյան Ավետիս Մարկոսի,
16. Ասլանյան Խաչատոր Մովսեսի,
17. Ասլանյան Սիրեկան Եղիակի,
18. Ասլանյան Վահինակ Սիրակի,
19. Ասլանյան Վարդան Հովհաննեսի,
20. Ավետիսյան Թորգոն Վաղարշակի (Մուրութի Թորգոն),
21. Ավետիսյան Սիրեկան Խաչատորի,
22. Արամ (Լաբյան),
23. Արշակյան Սերգոն,
24. Բաղալյան Զոհրաբ,
25. Բաղրասարյան Ոսկան,
26. Բասեյան Սիսակ Գրիգորի,
27. Բարսեղյան Եղիշ Հովսեփի (ծն. 1896 թ.),
28. Բողոքյան Առաքել Սեղմակի,
29. Բողոքյան Արամ,
30. Բողոքյան Գևորգ Սեղմակի,
31. Բողոքյան Զոհրաբ,
32. Բողոքյան Խաչատոր Սիսակի,
33. Բողոքյան Կարապետ,
34. Բողոքյան Մաթան,
35. Բողոքյան Մեհրաբ Հարությունի,
36. Բողոքյան Նունուֆար,
37. Բողոքյան Սեղմակ Վարդանի,
38. Բողոքյան Վահինակ,
39. Գալստյան Բագրատ,
40. Գալստյան Բեյրութ,
41. Գալստյան Պետրոս,
42. Գրիգոր (Բրուտյան),
43. Գրիգորյան Հակոբ,

44. Գրիգորյան Հմայակ Մնացի,
45. Գրիգորյան Վարդան Հակոբի,
46. Գորոյան (Սաֆարյան) Ենոք Գրիգորի,
47. Եղիակյան Անթանես,
48. Եղիակյան Սիրելան,
49. Եղիազարյան Արտեն,
50. Եղիազարյան Սարգիս,
51. Երեմյան Անթանես,
52. Երեմայն Եգոր,
53. Թաղևոսյան Պետրոս Մնացականի,
54. Իսահակյան Մեսրոպ Ահարոնի,
55. Խաչատրյան Աղաբեկ,
56. Կարապետյան Արամ Փանոսի,
57. Կարապետյան Գևորգ Փանոսի,
58. Կարապետյան Մանուկ,
59. Համբարձումյան Համբարձում (որմնադիր),
60. Հարությունյան Ալեք Հարությունի,
61. Հարությունյան Բեհրութ Ալեքսանի,
62. Հարությունյան Գևորգ,
63. Հարությունյան Կնյազ Ալեքսանի,
64. Հարությունյան Հակոբ Սկրտիչի,
65. Հարությունյան Ղազար Հարությունի,
66. Հարությունյան Մելիք Ալեքսանի,
67. Հարությունյան Ներսես Հարությունի,
68. Հարությունյան Ռաֆայել Ղազարի,
69. Հովհաննիսյան Անդրանիկ Ներսեսի,
70. Հովհաննիսյան Առաքել Հովհաննեսի,
71. Հովհաննիսյան Արամայիս,
72. Հովհաննիսյան Համբարձում (զոհվել է մայիսի 25-ին),
73. Հովհաննիսյան Հովհաննես,
74. Հովհաննիսյան Կարապետ Սերոբի,

75. Հովհաննիսյան Մակար Առաքելի,
76. Հովհաննիսյան Մուշեղ,
77. Հովհաննիսյան Ներսես Սերոբի,
78. Հովհաննիսյան Ռուկան Քոչարի,
79. Հովհաննիսյան Սերոբ Հովհաննեսի,
80. Ղազարյան Սահակ,
81. Ղազարյան Մարգար Հովհաննեսի,
82. Ղազարյան Մնացական,
83. Ղազարյան Վարդան,
84. Մարտիրոսյան Արմենակ Ավետիսի,
85. Մարտիրոսյան Խաչոն,
86. Մարտիրոսյան Հայկ,
87. Մարտիրոսյան Մանուկ,
88. Մարտիրոսյան Սելիք Եփրեմի,
89. Մարտիրոսյան Սարիբեկ Մեժլումի,
90. Մարտիրոսյան Սիրեկան Սարիբեկի,
91. Մարտիրոսյան Վահան Մանուկի,
92. Մարտիրոսյան Վարդան Ավետիսի,
93. Մայիլյան Ալեք,
94. Մայիլյան Սիեր,
95. Մանուկյան Գևորգ,
96. Սելիք-Առաքելյանց Սիրեկան Դանիելի (1871-1931),
97. Սելիք-Առաքելյանց Ասատուր Սիրեկանի
98. Սելիքսեթյան Դավիթ Հարությունի,
99. Մելոյան Սերգոն,
100. Մելոյան Մնացական Գևորգի,
101. Միրզոյան Արմենակ Ավետիսի,
102. Միրզոյան Խաչատուր Շմավոնի,
103. Միրզոյան Մանուկ (Սոլեյ Մանուկ),,,
104. Մինասյան Մանուկ Սահակի,
105. Մկրտչյան Արամայիս,

106. Սկրտչյան Կարապետ,
107. Մովսիսյան Գայանե Սիրեկանի,
108. Մուրադյան Գրիգոր Մուրադի (զնդացրորդ),
109. Մուրադյան Հարություն,
110. Շառոյան Սուլեմա Շահբաղի,
111. Շահբաղյան Հովհաննես Խաչատրուի,
112. Պապիկյան Մանուկ Հայրապետի,
113. Պապիկյան Սահակ,
114. Պետրոսյան Ավետիս,
115. Պետրոսյան Արտաշես Կաթմոսի (1871-1956),
116. Պետրոսյան Գրիգոր Պետրոսի,
117. Պետրոսյան Սերգեյ Սամսոնի,
118. Պողոսյան Հայրապետ,
119. Պողոսյան Ղևոնդ Ավետիսի,
120. Պողոսյան Սամվել,
121. Ռոստոմ,
122. Սահակյան Աղասի Վարդանի (1901 -),
123. Սահակյան Մանուկ,
124. Սահակյան Մեսրոպ,
125. Սահակյան Ստեփան Համբարձումի,
126. Սահակյան Վարդան,
127. Սահակյան Ռուզու,
128. Սարգսյան Գաբրիել,
129. Սարգսյան Մուշեղ,
130. Սարգսյան Ծմավոն Սեղմակի,
131. Սարգսյան Սահակ (ոսկերիչ, 1887-1975),
132. Սարգսյան Սերգոն,
133. Սաֆարյան Ենոք (հրետանավոր),
134. Սողոմոնյան Առաքել,
135. Սիրեկան (Պնչատյան),
136. Սմբատյան Գառնիկ,

137. Ստեփանյան Աղաբեկ Դավթի,
138. Ստեփանյան Հակոբ Սիմոնի,
139. Ստեփանյան Մաթևոս Սիմոնի,
140. Ստեփանյան Սահակ Սիմոնի,
141. Վարդան (Զանգուլակյան),
142. Վարդանյան Գրիգոր,
143. Վարդանյան Կարո Խաչատորի,
144. Տեր-Թորոսյան Ռուբեն,
145. Տեր-Հարությունյան Տեր-Ռաֆայել Տեր-Մարտիրոսի (1854-1946),
146. Տեր-Հովհաննիսյան Եղիշե,
147. Տեր-Մարտիրոսյան Հարություն Տեր-Ռաֆայելի (1902 -),
148. Տեր-Մարտիրոսյան Մաթևոս Տեր-Ռաֆայելի (1886 -),
149. Տեր-Մարտիրոսյան Նավասարդ Ռուկանի (- 1921)
150. Տեր-Մարտիրոսյան Զոհրապ Ռուկանի,
151. Տեր-Մարտիրոսյան Պետրոս Տեր-Սահակի,
152. Տեր-Մարտիրոսյան Վարդան Տեր-Սահակի,
153. Փարվանյան Խաչատոր Փիլոյի (1895-1986),
154. Քամալյան Նախշուն Քամալի,
155. Քամանչյան Աղաբեկ,
156. Քամանչյան Կարապետ,
157. Քոչարյան Կնյազ,
158. Քոչարյան Համբարձում Ասատորի,
159. Քոչարյան Մելիք,
160. Քոչարյան Սերգո,
161. Ֆրանգուլյան Ռուբեն Կարապետի,

ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼ

162. Մարկոսյան Ալեքսան Մարկոսի,
163. Մարկոսյան Բարսեղ Մարկոսի,
164. Մարկոսյան Պետրոս Մարկոսի,

165. Ալիքարյան Սամսոն (Ծուռ Սամոն, 1894-1984),

ԱՐԱԳԱԾ

ՏԵՐ ԴԱՆԻԵԼ ՔԱՀԱՆԱՅԻ ԽՈՒՄՔ

166. Ամիրյան Գեղամ Տոնոյի (1880 -),

167. Ամիրյան Սկրտիչ Զաքարի (1880 -),

168. Ամիրյան Պետրոս Ռոկանի (1892 -),

169. Ամիրյան Օհան Վարդանի (1873 -),

170. Ամրոյան Գևորգ Հարությունի (1875 -),

171. Այվազյան Արամ Սերոբի (1880 -),

172. Առաքելյան Մելիք Սարգսի (1886 -),

173. Ասլանյան Թեղուշ Մարտիրոսի (1858 -),

174. Ասլանյան Մնացական Ավետիսի (1888-1981),

175. Ավետիսյան Ավետիս Հարությունի (1887 -),

176. Ավետիսյան Գևորգ Սամսոնի (1902 -),

177. Ավետիսյան Հովհաննես Սողոմոնի (1875 -),

178. Ավետիսյան Ներսես Հարությունի (1895 -),

179. Ավետիսյան Սարգիս Մքրատի (1901 -),

180. Բաղդասարյան Եղիազար Աբրահամի (1891 -),

181. Բարսեղյան Հովհաննես Խաչատորի (1899 -),

182. Գալստյան Արամ Խաչատորի (1895 -),

183. Գալստյան Գալուստ Քերոբի (1902 -),

184. Գալստյան Սահակ Մկրտիչի (1880 -),

185. Գասպարյան Բարսեղ Ավետիսի (1883 -),

186. Գասպարյան Կնյազ Աղամի (1881 -),

187. Գասպարյան Մակար Հակոբի (1888 -),

188. Գասպարյան Մուշեղ Մովսեսի (1895 -),

189. Գասպարյան Պետրոս Սահակի (1880 - զոհվել է մայիսի 26-ին),

190. Գասպարյան Սիմոն Ներսեսի (1870 -),

191. Գրիգորյան Խաչատուր Սոլքիասի (1880 -),
192. Գրիգորյան Միհրան Զաքարի (1900 -),
193. Գրիգորյան Սերգո Գալուստի (1876 -),
194. Գուլոյան Բեյբութ Սահակի (1880 -),
195. Գուլոյի Արամ (զոհվել է մայիսի 24-ին),
196. Գևորգյան Արել Սահակի (1885 -),
197. Գևորգյան Գևորգ Հակոբի (1880 -),
198. Գևորգյան Մամիկոն Հայրապետի (1898 -),
199. Դավթյան Ավետիս Առաքելի (1896 -),
200. Դավթյան Դավիթ Սահակի (1880 -),
201. Դավթյան Թադևոս Մելքոնի (1860 -),
202. Դավթյան Խաչատուր Սահակի (1880 -),
203. Դավթյան Հովհաննես Մանուկի (1880 -),
204. Դավթյան Մամիկոն Խաչատուրի (1880 -),
205. Դավթյան Սարգիս Սիմոնի (1869 -),
206. Եղիազարյան Գեղամ Վարդանի (1884 -),
207. Եղիազարյան Գևորգ Հովհաննեսի (1876 -),
208. Եղիազարյան Գևորգ Մանուկի (1888 -),
209. Չաղեյան Ավետիս Սիմոնի (1874 -),
210. Խալաթյան Թորգոն Անտոնի (1886 -),
211. Խալաթյան Սրապ Սարգսի (1885 -),
212. Խաչատրյան Հովհանն Առաքելի (1876 -),
213. Խոսրովյան Վանո Ներսեսի (1878 -),
214. Խորշույյան Ռուբեն Արամի (1898 -),
215. Կարասպետյան Հանբարձում Օհանի (1892 -),
216. Կարապետյան Հմայակ Սիրեկանի (1901 -),
217. Կարապետյան Նիկոլայ (զոհվել է մայիսի 26-ին),
218. Կիրակոսյան Հանբարձում Գրիգորի (1901 -),
219. Հակոբյան Ավետիս Մելքոնի (1899 -),
220. Հակոբյան Արամ Հովհաննեսի (1902 -),
221. Հակոբյան Արտաշես Սիրայելի (1899 -),

222. Հակոբյան Գեղամ Տոնոյի (1867 -),
223. Հակոբյան Միհրան Խաչատրութի (1886 -),
224. Հակոբյան Մանուկ Կիրակոսի (1889 -),
225. Հակոբյան Միհրան Խաչատրութի (1886 -),
226. Հակոբյան Վաղինակ Հովհաննեսի (1888 -),
227. Հայրապետյան Արամ Մնացի (1885 -),
228. Հարությունյան Անուշավան Արմենակի (1900 -),
229. Հարությունյան Բաղդասար Վարդանի (1870 -),
230. Հարությունյան Գարեգին Թումասի (1892 -),
231. Հարությունյան Գեղամ Գասպարի (1878 -),
232. Հարությունյան Գևորգ Մնացականի (1888-1980),
233. Հարությունյան Գևորգ Ստեփանի (1872 -),
234. Հարությունյան Եգոր Բաղդասարի (1881 -),
235. Հարությունյան Խաչատրութ Արմենակի (1888 -),
236. Հարությունյան Հարություն Մանուկի (1880 -),
237. Հարությունյան Հարություն Մնացի (1896 -),
238. Հարությունյան Նարիբեկ Աղամի (1897 -),
239. Հարությունյան Վաչագան Վասիլի (1902 -),
240. Հովհաննիսյան Աղաքեկ Աբրահամի (1891 -),
241. Հովհաննիսյան Աղաքեկ Սիմոնի (1889 -),
242. Հովհաննիսյան Արմենակ Պետրոսի (1902 -),
243. Հովհաննիսյան Մելքոն Սահակի (1873 -),
244. Հովհաննիսյան Նահապետ Գրիգորի (1897-1985),
245. Հովհաննիսյան Նիկողոս Գրիգորի (1885-1921, մահացել
է ճակատամարտում ստացած ցնցակաթվածից),
246. Հովհաննիսյան Սամսոն Պետրոսի (1887 -),
247. Հովհաննիսյան Սիրեկան Ենգիբարի (1877 -),
248. Հովհաննիսյան Ստեփան Մնացականի (1874 -),
249. Ղազարյան Աբրահամ Արսենի (1879 -),
250. Մանուկյան Ավետիս Առաքելի (1896-),
251. Մանուկյան Կյուրեղ Ղազարի (1901 -),

252. Մանուկյան Մակար Կարապետի (1870 -),
253. Մարգարյան Սկրտիչ Ղազարի (1880 -),
254. Մարգարյան Նիկողոս Պետրոսի (1863-1938),
255. Մարգարյան Սամվել Տոնյի (1855 -),
256. Մարկոսյան Սկրտիչ Ղազարի (1880 -),
257. Մելիքյան Պարսամ Առաքելի (1901 -),
258. Մելոյան Պետրոս Հովհաննեսի (1890 -),
259. Մելքոնյան Թորգոն Հովհաննի (1887 -),
260. Մելքոնյան Համայակ Հովհանի (1898 -),
261. Մելքոնյան Մարգար Կիրակոսի (1880 -),
262. Մելքոնյան Մելք Հովհանի (1898 -),
263. Մելքոնյան Սկրտիչ Պողոսի (1900 -),
264. Միրոյան Հովհան Տոնյի (1880 -),
265. Մխիթարյան Ալեք Գևորգի (1897 -),
266. Մխիթարյան Արամ Ավետիսի (1902 -),
267. Մխիթարյան Կարապետ Հովհանի (1881 -),
268. Մխիթարյան Հովհան Սարգսի (1887 -),
269. Մխիթարյան Նարիբեկ Սարգսի (1902 -),
270. Մխիթարյան Պարսամ Սկրտիչի (1885 -),
271. Մուրադյան Արշակ Թաղիսոսի (1881 -),
272. Մուրադյան Հակոբ Գևորգի (1899-),
273. Շահրազյան Արտաշես Մաթևոսի (1890 -),
274. Շահրազյան Հարություն (1890 - զոհվել է մայիսի 26-ին),
275. Շահրազյան Նահապետ Խաչատրուի (1902 -),
276. Շահրազյան Արամ Մաթևոսի (1888 -),
277. Պետրոսյան Աբել Եղիազարի (1890 -),
278. Պետրոսյան Բաղդասար Մարգարի (1887 -),
279. Պետրոսյան Գեղամ Եղիազարի (1899 -),
280. Պետրոսյան Գրիգոր Պետրոսի (1862 -),
281. Պետրոսյան Գևորգ Մարգարի (1898-1979),
282. Պետրոսյան Սինաս Պողոսի (1875 -),

283. Պետրոսյան Նիկոլայ Խաչատրովի (1897 -),
284. Պետրոսյան Պետրոս Գրիգորի (1862 -),
285. Պետրոսյան Սիմոն Արշակի (1884 -),
286. Պետրոսյան Վան Ներսեսի (1891 -),
287. Պողոսյան Եղիազար Հովհաննեսի (1880 -),
288. Պողոսյան Ղազար Գրիգորի (1899-),
289. Պողոսյան Մարգար Հովհաննեսի (1880 -),
290. Սահակյան Եզրը Ներսեսի (1889 -),
291. Սահակյան Համբարձում Մանուկի (1876 -),
292. Սահակյան Մանաս Ներսեսի (1887 -),
293. Սահակյան Մինաս Ստեփանի (1888 -),
294. Սահակյան Սահակ Մանուկի (1880 -),
295. Սահակյան Սահակ Սևոյի (1894 -),
296. Սահակյան Սեյրան Խուրշուդի (1880 -),
297. Սահակյան Վաղարշակ Գրիգորի (1902 -),
298. Սարադի Սիմոն (զոհվել է մայիսի 22-ին),
299. Սարգսյան Գրիգոր Սեղբակի (1901-),
300. Սարգսյան Կմյազ Մեսրոպի (1880 -),
301. Սարգսյան Հաբեթնակ Մարտիրոսի (1893 -),
302. Սարգսյան Նահապետ Մեսրոպի (1902 -),
303. Սարգսյան Նիկոլայ Կարապետի (1902 -),
304. Սարգսյան Պարսամ Մեսրոպի (1892 -),
305. Սիմոնյան Արշակ Պողոսի (1886 -),
306. Սևոյան Սիմոն Սահակի (1852 -),
307. Վարդանյան Եփրեմ Սարգսի (1874 -),
308. Վարդանյան Վարդանես Պետրոսի (1900 -),
309. Տեր-Դանիելյան Արշակ Տեր-Ղևոնդի (1884-1939),
310. Տեր-Դանիելյան Գևորգ Տեր-Ղևոնդի (1887-1937),
311. Տեր-Դանիելյան Տեր Դանիել Տեր-Ղևոնդի (1873-1954),
312. Տեր-Դանիելյան Սիմոն Տեր-Ղևոնդի (1885-1942),
313. Տռնոյան Ալեք Սեղբակի (1901 -),

314. Տունյան Անդրանիկ Հովհանի (1902 -),

315. Քալաշյան Մաքս Մանուկի (1875 -),

316. Քոչարյան Ներսես Սիբայելի (1892 -),

ԱՐԱ ԳՅՈՒՂ (ԵՂՎԱՐԴ)

ԱՐՍԵՆ ՏԵՐ-ՊՈՂՋՈՍՅԱՆԻ ԽՈՒՄԲ

317. Գրիգորյան Մերգոն Սիմասի (1892-),

318. Մարգարյան Մանուկ Ներսեսի (1892-1945),

319. Մեժլումյան Եղիշ Սիմասի (1892-),

320. Վարդանյան Հաբեթ Ալեքսանի,

321. Տեր-Պողոսյան Արսեն Սամսոնի (1864-1938),

322. Տեր-Պողոսյան Ավետիք Նիկոլի (1894-),

323. Տեր-Պողոսյան Գարուշ Զոհրաբի,

324. Տեր-Պողոսյան Գերասիմ Զոհրաբի,

325. Տեր-Պողոսյան Վանուշ Վաղարշակի (1892/4-),

326. Տեր-Պողոսյան Տիգրան Վաղարշակի,

ԱՐԱՅԻ

327. Աղեկյան Հովակիմ,

328. Ավետիսյան Անդրուշ Ղազարի (1901 - զոհվել է մայիսի 24-ին),

329. Ավետիսյան Հովհաննես Ղազարի (1898 - զոհվել է մայիսի 25-ին),

330. Գևորգյան Արշակ Ալեքի,

331. Դավթյան Մարգար,

332. Կիրակոսյան Տոնե (Սիրաբի կամրջի մոտ, ձորի մեջ վիրավորվել է),

333. Հունանյան Երվանդ Բաղդասարի (1898-1990),

334. Հունանյան Համոն,

335. Հունանյան Մկրտիչ,

336. Հունանյան Արտուշ,

337. Մանուկյան Գևորգ,

- 338. Մելիքյան Գեղամ,
- 339. Մելիքյան Սահակ,
- 340. Մելքոնյան Սարգիս Գալուստի (1900-1963),
- 341. Սարգսյան Վաղարշակ,
- 342. Պողոսյան Երվանդ,

ԱՓՆԱ

- 343. Այվազյան Արգար Գասպարի (1888-),
- 344. Բարիկյան Շմավոն,
- 345. Կարապետյան Աղամ Նազարի (1894-1983),
- 346. Ղամբարյան Զարիֆ Կարապետի (1902-1971),
- 347. Ղամբարյան Հակոբ Կարապետի (1897-1948),
- 348. Ղամբարյան Հայրապետ Կարապետի (1893-1974),
- 349. Մուրադյան Սամսոն Սիմոնի (Մուրոյի Սամսոն, 1901-1990),
- 350. Սահակյան Բաղդասար Սարգսի (1873-1961),

ԲՈՒԺԱԿԱՆ

- 351. Մանուկյան Արշակ Եղիազարի (1878-1937),

ԳԵՂԱՐՈՑ

- 352. Աբրահամյան Արմենակ Դավթի,
- 353. Աբրահամյան Բագրատ Ղազարի (1889-1963),
- 354. Աբրահամյան Հմայակ Խաչատուրի,
- 355. Աբրահամյան Պատվական Ավագի,
- 456. Աբրահամյան Վազգեն Ռաֆայելի,

ԴՈՎՐԻ (ԵՂՎԱՐԴ)

357. Հակոբյան Արսեն (1848-1923),

358. Տեղ Գրիգոր,

ԵՂԻՊԱՏՐՈՒԾ

359. Բարայան Մանուկ Սարգսի (1893 - զոհվել է մայիսի 24-ին),

360. Բարայան Մուշեղ Գալուստի (1891 - զոհվել է մայիսի 24-ին),

361. Գրիգորյան Նահապետ Գրիգորի (1891-1936),

362. Գևորգյան Մաթևոս Շահբաղի,

363. Թովմասյան Պետրոս,

364. Խաչատրյան Արշավիր (զոհվել է մայիսի 23-ին),

365. Խաչատրյան Համբարձում (զոհվել է մայիսի 24-ին),

366. Խաչատրյան Մանուկ (զոհվել է մայիսի 27-ին),

367. Համբարձումյան Սեդրակ (1891-1976),

368. Մելքոնյան Արագ (-1942),

369. Մելքոնյան Հայրապետ.

370. Մելքոնյան Նահապետ (-1922),

371. Մինասյան Ղազար Գրիգորի (1881-1965),

372. Շահբաղյան Բարեղամ Մաթևոսի (1898-1938, ստալինյան

բռնատիրության զոհ),

373. Շահբաղյան Կարապետ Դավիթ (1893-1978),

ԵՐՆՉԱՏԱՓ

374. Ռուկասյան Եգոր (1866-1945),

375. Մելքոնյան Մամիկոն Սեդրակի (1901-)

